ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---- --------- 2021 թվականի №___Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի №166Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 15-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու և Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003 թվականի սեպտեմբերի 30-ի №62Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №166Ա որոշմամբ հաստատված հավելվածի՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման սակագների հաշվարկման՝

1) մեթոդիկայի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ծառայությունների մատուցման սակագների հաշվարկման հիմքում դրվում է անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը, համաձայն որի՝ անհրաժեշտ հասույթը պետք է բավարարի Ընկերությունների հուսալի, անվտանգ և շարունակական գործունեության համար անհրաժեշտ ու հիմնավորված

շահագործման և պահպանման ծախսերի իրականացմանը, հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցմանը և ներգրավված կապիտալի դիմաց թույլատրելի (ողջամիտ) շահույթի ստացման ապահովմանը: Անհրաժեշտ հասույթը (ԱՀ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԱՀ} = \text{ՇՊԾ} + \text{Մ} + \text{ԹՇ} + \text{ՖԾ} + \text{ՓՎԳ} - \text{ԱԵ},$$

որտեղ՝

ՇՊԾ-ն Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի մեծությունն է,

Մ-ն Ծառայությունների մատուցման համար օգտակար և օգտագործվող հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի արժեքն է,

ԹՇ-ն Ծառայությունների մատուցման համար օգտակար և օգտագործվող զուտ ակտիվների դիմաց թույլատրելի շահույթի մեծությունն է,

ՖԾ-ն Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերն են,

ՓՎԳ-ն անհրաժեշտ հասույթում ներառված Ծառայությունների մատուցման հաշվարկային և փաստացի քանակների շեղման արդյունքում ձևավորված փոխհատուցման կամ վերադարձման ենթակա գումարն է, որը հաշվարկվում է 2022 թվականի փետրվարի 1-ից սկսած ժամանակահատվածների համար,

ԱԵ-ն այլ եկամուտն է:»,

2) մեթոդիկան լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1 կետով.

«10.1. Անհրաժեշտ հասույթում ներառված Ծառայությունների մատուցման հաշվարկային և փաստացի քանակների շեղման արդյունքում ձևավորված փոխհատուցման կամ վերադարձման ենթակա գումարը (ՓՎԳ) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՓՎԳ} = \sum_{i=1}^{m} \left(\text{Ծ}_i^{\text{հ}} - \text{Ծ}_i^{\text{Փ}}\right) * \text{Ս}_i * \left(1 + \frac{\text{Տ}}{100\%}\right),$$

որտեղ՝

m-ը Հանձնաժողովի նիստին Ծառայությունների մատուցման սակագների վերանայման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող այն ժամանակահատվածի ամիսներն են (բացառությամբ նշված նախագծի

ներկայացման ամսվան նախորդող ամսվա), որոնց համար սույն կետի համաձայն չի հաշվարկվել և Ծառայությունների մատուցման սակագներում չի ներառվել ՓՎԳ գումար,

Ծ$^{հ}_{i}$-ն i-րդ ամսում մատուցվող Ծառայությունների հաշվարկային քանակն է,

Ծ$^{փ}_{i}$-ն i-րդ ամսում մատուցվող Ծառայությունների փաստացի քանակն է,

U$_{i}$-ն i-րդ ամսում գործող Հանձնաժողովի կողմից սահմանված Ծառայության մատուցման սակագինն է,

S-ն Ծառայությունների մատուցման հաշվարկային և փաստացի քանակների շեղման արդյունքում ձևավորված փոխհատուցման կամ վերադարձման ենթակա դրամական միջոցների ներգրավման, կամ հնարավոր ավանդադրման համար անհրաժեշտ տոկոսադրույքն է, որը որոշվում է ֆինանսական շուկայի ցուցանիշների վերլուծության արդյունքում:»,

3) մեթոդիկայի 11-րդ կետի 1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

4) մեթոդիկայի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Ընկերությունների համար, էլեկտրաէներգետիկական համակարգին մատուցվող ծառայության հաշվառման հնարավորություններից և նպատակահարմարությունից ելնելով, կիրառվում են միադրույք սակագներ:»,

5) մեթոդիկայի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Ծառայությունների սակագինը (U) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \frac{ԱՀ}{\boldsymbol{W}_{Ս}+\boldsymbol{W}_{ԲՀ}+\boldsymbol{W}_{ՈՍ}+\boldsymbol{W}_{Ա}},$$

որտեղ՝

W$_{Ս}$-ն էլեկտրական էներգիայի մատակարարման (այդ թվում՝ երաշխավորված մատակարարման) լիցենզիա ունեցող անձանց կողմից գնվող էլեկտրական էներգիայի քանակն է՝ համաձայն Հանձնաժողովի հաստատած էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների պահանջներին համապատասխան «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կազմած էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ներկրման և արտահանման (տարանցման) կանխատեսվող հաշվեկշռի (այսուհետ՝ Էլեկտրաէներգետիկական համակարգի հաշվեկշիռ),

$W_{ԲՀ}$-ն էլեկտրական էներգիայի բաշխման և հաղորդման լիցենզիա ունեցող անձանց կողմից սեփական կարիքների և բաշխման ու հաղորդման ցանցերում կորուստների փոխհատուցման նպատակով գնվող էլեկտրական էներգիայի քանակն է՝ համաձայն Էլեկտրաէներգետիկական համակարգի հաշվեկշռի,

$W_{ՈՍ}$-ն որակավորված սպառողների կողմից գնվող էլեկտրական էներգիայի քանակն է՝ համաձայն Էլեկտրաէներգետիկական համակարգի հաշվեկշռի,

$W_{Ա}$-ն էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների կողմից արտահանվող և տարանցվող էլեկտրական էներգիայի քանակն է՝ համաձայն Էլեկտրաէներգետիկական համակարգի հաշվեկշռի:»,

6) մեթոդիկայի 14-րդ և 15-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
--- ----------2021թ.